

Իւսկիւտարցիին իւր կեանքի մէջ բնաւ չըսեր իւր մէկ մտերիմ բարեկամին կամ ազգականին. «Այս գիշեր մեր տուն հրամմէ, կերակուրը մէկ տեղ ուտենք»: Բայց իւր կեանքին ամեն օրերու մէջ ըսելէ չդադարիր այն մարդուն՝ որու երեսը կեանքին մէջ անգամ մը տեսած է. «Գիշեր մը խնձոյք մը ըրէ՛ ու զիս ալ հրաւիրէ եղբայր, ի՞նչ կ'ըլլայ. մենք ալ օտարական չենք»:

Գինետունները հոս այնչափ համակրութիւն եւ քաջալերութիւն գտած են, որ յանդգնած են եկեղեցւոյն քիթը մտնել, այնքան մօտեցած են անոր: Գինետուններուն յաճախորդները Արամեան զաւակներն են, որ գիշերուան երեքին տուն կդառնան, վասնզի, ինչպէս ըսինք՝ ազգային վիճաբանութիւնները գինետան մէջ տեղի կ'ունենան եւ ան ալ ժամը երկուքէն վերջը: Ժամը երկուքէն առաջ վիճաբանութիւնն արգիլուած է. երկու ժամ շարունակ օղի կը խմուի եւ ետքը աստենապետն – գինեպանը – զանգակ հնչեցնելով՝ դիւանին պատրաստուած եւ աստենին բացուած ըլլալն կը յայտնէ:

Իւսկիւտարցիին նմանը չկայ առեւտուրի մէջ. Պօլսոյ կողմը տասը բարայի ծախուած *թօմաթէսը* երկու դահեկան վար չեն տար Իւսկիւտար:

Սէլամսըզցին լաւ հմտութիւն եւ կատարեալ տեղեկութիւն ունի ածուխին վրայ. ուստի երբ ձմեռուան համար ածուխ առնելու երթաք՝ սէլամսըզցի մը առէք ձեր հետը եւ թող տուէք, որ ան ընէ ընտրութիւնը: Ածուխդ առի՞ր, *մնաք բարուդ* ըսէ ու գործդ գնա՛ :

Սէլամսըզցի ժողովուրդն ընդհանրապէս բարձր ձայնով կիսօսի կամ կհայհոյէ, եւ աս ալ քաջութեան եւ անկեղծութեան նշան կը համարի:

Հնութիւններու մէջ նշանաւոր են *թիւյսիւզի* սրճարանն եւ անոր բազմոցները: Այս սրճարանի մէջ կտոժորի ամեն մարդ, թէ ի՛նչ է ածուխի, փայտի եւ միսի գիները թէ որո՛ւ կնիկն երիկն թողած ու փախած է, թէ երիկն թողած ու ինչո՛ւ փախած է, թէ որո՛ւ աղջիկն ո՛ր երիտասարդի պիտի նշանուի եւ թէ ինչո՛ւ պիտի նշանուի: Հոս է նաեւ *չիֆթլիկ* ըսուած զբօսավայրն, որ ամեն տեսակ զբօսանք ունի իւր մէջը. մուտքը ազատ է, ելնելու համար ալ դրամ վճարելու հարկ չկայ: Հոս ալ երբեմն ազգային խնդիրներու վրայ վիճաբանութիւններ տեղի կ'ունենան: Ազգային վիճաբանութիւնները տեղի չեն ունենար միայն այն տեղերն՝ ուր որ պէտք էին ըլլալ:

Իգական սեռն ալ արականին պէս վիճաբանութիւնը քիչ մը շատ կսիրէ հոս: Քանի մը անգամներ խնամակալութիւններ կազմուեցան եւ